ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Արշակ Գևորգյան[1]

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *խորքային պետություն, պարաքաղաքականություն, զուգահեռ պետություն, երկակի պետություն, հասարակություն-բանակ հարաբերություններ, ռազմական հեղաշրջումներ, պետական կառավարման շեղումնաբանություն*

«Գոյություն ունեն հայտնի հայտնիներ, որոնք դուք գիտեք, որ գիտեք: Գոյություն ունեն հայտնի անհայտներ, որոնք դուք գիտեք, որ չգիտեք: Սակայն գոյություն ունեն նաև անհայտ անհայտներ, որոնք դուք չգիտեք, որ չգիտեք»[2]*:*

Դոնալդ Ռամսֆելդ
ԱՄՆ պաշտպանության քարտուղար
(1975-1977 և 2001-2006 թթ.)

1973 թ. սեպտեմբերի 26-ին Թուրքիայի ապագա վարչապետ Բյուլենթ Էջևիթը 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո անցումային ընտրություններին ընդառաջ Գիրեսունում ունեցած ելույթում բարձրաձայնեց երկրում ստվերային պարառազմական կառույցի առկայության մասին[3]: Քաղաքական

[1]պ.գ.թ., ՀՀ արտաքին գործերի նախարարություն, էլ. փոստ՝ a.gevorkian@ysu.am

[2] Ռամսֆելդի՝ թևավոր դարձած արտահայտությունը հնչեցվել է ԱՄՆ պաշտպանության քարտուղարության 2002 թ. փետրվարի 12-ի ճեպազրույցի ժամանակ: Հմմտ. Rumsfeld D., *Known and Unknown: A Memoir*, New York: Sentinel, 2011, xiii: Մեջբերումը բերված է ըստ բանավոր խոսքի հեղինակային խմբագրման (տե՛ս նույնի, *Rumsfeld's Rules: Leadership Lessons in Business, Politics, War, and Life*, New York: Broadside Books, 2013, Kindle loc. 1372/4111):

[3]Տե՛ս *"Ecevit, Sıkıyönetim sonrası duyduğu kuşkuları açıkladı",* Cumhuriyet, 27.09.1973: Հատկանշական է, որ նույնաբովանդակ թեզեր առկա էին նաև Էջևիթի գլխավորած Հանրապետական ժողովրդական կուսակցության 1973 թ. նախընտրական ծրագրում:

դաշտի կենտրոնական դերակատարներից մեկի կողմից նման բացահայտումն անխուսափելիորեն բացեց տարամեկնաբանությունների Պանդորայի արկղը՝ սկիզբ դնելով թուրքական հասարակական-քաղաքական հոլովույթում այսպես կոչված խորքային պետության թեմայով շուրջ 50 տարի շարունակվող քննարկումներին[4]: Թուրքական հայտնի «Հյուրրիյեթ» թերթի գլխավոր խմբագիր Էրթուղրուլ Օզքյոքը 1996թ. իր հոդվածում առանց անուն նշելու ակնարկում է[5], որ թուրք իրականության մեջ «խորքային պետություն» (*derin devlet*) եզրն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ԹՀ արդարադատության, ապա՝ ներքին գործերի նախարար Մեհմեթ Աղարը[6]:

Հմմտ. *Ak günlere: Cumhuriyet Halk Partisi 1973 seçim bildirgesi,* Ankara: Halkçı Gazetecilik ve Matbaacılık İşletmesi, 1973, ss. 174, 204:

[4] Միայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (ԹԱՄԺ) խորքային պետության շուրջ շարունակական քննարկումների ծավալը բավարար է առանձին մասնագիտական ուսումնասիրությունների համար: Տե՛ս, օրինակ, Nefes T. S., "*The Conspiratorial Style in Turkish Politics: Discussing the Deep State in the Parliament",* in Uscinski J. E., Conspiracy Theories and the People Who Believe Them, New York: Oxford University Press, 2018, pp. 385-394: Սույն հոդվածի պատրաստման ընթացքում ԹԱՄԺ 2022 թ. ապրիլի 19-ի հերթական լիագումար նիստի ընթացքում խորքային պետության թեմային հերթական անդրադարձն է կատարվել՝ իշխանություն-ընդդիմություն փոխադարձ մեղադրանքների համատեքստում: Տե՛ս *Türkiye Büyük Millet Meclisi Tutanak dergisi*, 27. Dönem, 5. Yasama Yılı, 81. Birleşim (19.04.2022),
https://www5.tbmm.gov.tr/tutanak/donem27/yil5/ham/b08101h.htm (հասանելի 23.05.2022):

[5] Տե՛ս Özkök E.,*"Derin Devlet"*, Hürriyet, 14.09.1996, հմմտ. նաև նույնի *''Derin Türkiye'',* Hürriyet, 29.11.1995 և նույնի*"Derin devlet sözünün mucidi"*, Hürriyet, 25.10.1997: Օզքյոքն իր հետագա հոդվածում մանրամասնում է, որ թուրքական քաղաքական բառապաշարում «խորքային» բառի կիրառությունը (*«Խորքային Թուրքիա»* իմաստով՝ իբրև ֆրանսալեզու միջավայրում տարածված *«la France profonde»*-ի տրամաբանության թուրքական տեղայնացում) կապվում է 1996-1997 թթ. ԹՀ ՆԳ նախարար Մերալ Աքշեների անվան հետ: Իսկ Մեհմեթ Աղարի կողմից «խորքային պետություն» արտահայտությունն իր նախնական կիրառության մեջ ունեցել է ներկա նշանակությունից տարբերվող՝ շատ ավելի դրական իմաստ:

[6] Ինքը՝ Մ. Աղարը 2002 թ. դեկտեմբերին «Ճշմարիտ ուղի» կուսակցության ղեկավար ընտրվելուց հետո համագումարի առջև ունեցած ելույթում ներկայացրել էր խորքային պետության սեփական ընկալումը. *«Թուրքական պետությունն ամենավերջինը Մոսուլից ու Քիրքուքից է հետ քաշվել: Այդ օրվանից հետո այլևս երբեք չնահանջելու կամք է ձևավորվել: Մենք այդ կամքին խորքային պետության կամք ենք կոչում: Խորքային պետությունը ոչ թե պետություն խորքերում, այլ ազգի գիտակցության մեջ է: Խորքային պետությունն այլևս երբեք հետ չքաշվելու կամքն է»: Տե՛ս "Derin devletin mucidi DYP'nin*

Թուրքերեն եզրույթի անգլերեն բառապատճենումն իր հաստատուն տեղն է գտել միջազգային քաղաքագիտական բառապաշարում՝ որոշ հեղինակների կողմից ներկայացվելով որպես թուրքական քաղաքական «նոու-հաու»[7]:

Չնայած մասնագիտական և հրապարակախոսական շրջանակներում տերմինի՝ տարածմանը՝ խորքային պետության ուսումնասիրությունը կապված է «տեսական անորոշության» հետ, ինչը բացատրվում է երևույթի արտաքին ամորֆությամբ[8]: Այս իմաստով խորքային պետությունը հանդես է գալիս դասական «սև արկղի» դերում. մասամբ տեսանելի են նրա մուտքային ու ելքային ազդակները, իսկ համակարգի գործունեության օրինաչափություններն անհայտ են հետազոտողին[9]: Բնական է, որ գիտական գրականության մեջ խորքային պետության գաղափարը համեմատաբար թույլ է լուսաբանված[10]:

---

yeni başkanı”, Hürriyet, 15.12.2002: Հատկանշական է, որ 2011 թ. Աղարը «Սուսուրլուքի գործով» անցել է որպես մեղադրյալ և մինչև 2013 թ. ապրիլն անցկացրել անազատության մեջ:

[7] Տե՛ս, օրինակ, *“Deep State”* in Abjorensen N., Historical Dictionary of Democracy, Lanham: Rowman & Littlefield, 2019, pp. 105-106: ՌԴ նախկին փոխվարչապետ Վ. Սուրկովը տերմինի տարածումը նկարագրում է հետևյալ կերպ. *«Ոչ վաղուց թուրքական քաղաքական բառապաշարի «derin devlet» բչերին հայտնի եզրույթը տարածվել է ամերիկյան մամուլի կողմից, անգլերեն թարգմանությամբ հնչելով «deep state», ապա այնտեղից էլ տարածվել է մեր* [ռուսական, — Ա. Գ.] *ՁԼՄ-ներում»:* Տե՛ս Сурков В., *«Долгое государство Путина: о том, что здесь вообще происходит»,* Независимая газета, 11.02.2019, https://www.ng.ru/ideas/2019-02-11/5_7503_surkov.html (հասանելի 23.05.2022):

[8] Հմմտ. Söyler M., *The Turkish Deep State: State Consolidation, Civil-Military Relations and Democracy,* London: Routledge, 2015, p. 3: Ամերիկյան հայտնի Արտաքին հարաբերությունների խորհուրդ (CFR) ուղեղային կենտրոնի փորձագետ Սթիվեն Քուքը խորքային պետության կառուցվածքային անձևությունը նկարագրելու համար այն համեմատել է տիեզերական մուգ նյութի հետ: Տե՛ս Cook S. A., *“The Deep State Mirage in Turkey”*, Cipher Brief, 22.03.2017, https://www.thecipherbrief.com/the-deep-state-mirage-in-turkey (հասանելի էր 23.05.2022):

[9] Հմմտ. Դևիդ Իսթոնի քաղաքական համակարգի գործունեության «սև արկղի» մոդելի հետ: Տե՛ս Easton D., *A Framework for Political Analysis*, Englewood Cliffs, NJ: Prentice-Hall, 1965, pp. 110, diag. 2:

[10] Հմմտ. Սուվարյան Յու., *Հանրային կառավարման քաղաքակրթական ու քաղաքագիտական կազմակերպման հիմնախնդիրները*, Լրաբեր հասարակական գիտությունների, № 2(662), մայիս-օգոստոս 2021, էջ 130:

Ինչպես 2002 թ. Պետքարտուղարություն ուղարկած գաղտնագրում դիպուկ կերպով նկատում է Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Փիրսոնը՝ *«խորքային պետությունը շատ, շատ խորն է՝ ասես ջրասուզակը ծովի հատակին»*[11]: Ուստի պատահական չէ, որ այս բավական անորոշ թեմային նվիրված հետազոտությունները գտնվում են դավադրաբանական, դասական քաղաքագիտական և պարաքաղաքական հայեցակետերի խաչմերուկում:

Ժամանակակից Թուրքիան մի երկիր է, որտեղ դավադրության ամենատարբեր տեսությունները լայնորեն տարածված են հասարակական խոսույթում, իսկ ներքաղաքական նպատակներով դրանց շահարկումը դարձել է քաղաքական գործիքակազմի մաս[12]: Այս համատեքստում զարմանալի չէ, որ որոշ

[11] Փաստաթուղթը 2011 թ. հրապարակվել է «ՎիքիԼիքսի» կողմից: Տե՛ս Pearson W.R.,*"Turkey's Deep State"*, Classified U.S. Embassy Cable № 02ANKARA8252_a, 15.11.2002, https://wikileaks.org/plusd/cables/02ANKARA8252_a.html: Դեսպան Փիրսոնը դիվանագիտական աշխատանքից հեռանալուց հետո շարունակել է թեմային անդրադառնալ նաև հրապախոսական հարթակներում: Տե՛ս, օրինակ, նույնի *"Turkey: Exhuming the Deep State"*, Middle East Institute, 03.03.2015, https://www.mei.edu/publications/turkey-exhuming-deep-state (հասանելի էին 23.05.2022):

[12] Հարցի շուրջ տե՛ս Medeiros J. de, *Conspiracy Theory in Turkey: Politics and Protest in the Age of 'Post-Truth'*, New York: I. B. Tauris, 2018, հատկապես՝ էջ 17-73:

Դավադրության տեսությունների հանրային սպառման տեսակետից բնութագրական են նավատորմի նախկին սպա, լրագրող, հայտնի դավադրապաշտ Էրոլ Մյուրթերջիմլերի ընդհանուր առմամբ ավելի քան 1200 էջ ծավալով երկու գրքերը: Առաջին անգամ համապատասխանաբար 2005 և 2007 թթ. լույս տեսած հատորները մինչ օրս վերահրատարակվել են 15 և 13 անգամ: Տե՛ս Mütercimler E., *Komplo teorileri: Aynanın arkası'nda kalan gerçekler,* 15. baskı, İstanbul: Alfa Yayınları, 2019 և նույնի *Akıl oyunu: Komplo teorileri 2, Aynanın arkası'nda kalan gerçekler,* 13. baskı, İstanbul: Alfa Yayınları, 2019:

Հասարակության նման տրամադրություններով է բացատրվում նաև թուրքական հեռուստատեսային ֆիլմարտադրության մեջ այս թեմայով հեռուստապատումների մասսայականությունը: Տե՛ս de Bruijn P., *Deep State. Visual Socio-Political Communication in the Television Series and Serials of the Turkish Television Channel Samanyolu*, TV/Series, № 13, 2018, https://journals.openedition.org/tvseries/2500; Carney J., *Genre strikes back: conspiracy theory, post-truth politics, and the Turkish crime drama Valley of the Wolves,* TV/Series, № 13, 2018, https://journals.openedition.org/tvseries/2467 (հասանելի էին 23.05.2022):

ուսումնասիրողներ խորքային պետությանն անդրադառնում են հենց նման դիտանկյունից[13]:

Հետազոտողների մի այլ խումբ, իր հերթին, փորձում է թեման դիտարկել կա՛մ առանձին վերցված հասարակագիտական կաղապարի (ինչպես օրինակ՝ Մանսուր Օլսոնի բաշխողական կոալիցիաների տեսության[14]) շրջանակում, կա՛մ դասական քաղաքականության մեջ պարաքաղաքականության մասնավոր դրսևորումների (ինչպես օրինակ՝ պետության արտաօրինական գործողությունների) համատեքստում[15], կա՛մ իբրև քաղաքական գործընթացների երկրորդային հետևանք (ինչպես օրինակ՝ քաղաքական ռեժիմի տրանսֆորմացման և ժողովրդավարական կոնսոլիդացման փոխհարաբերությունների համատեքստում[16]):

Սույն հոդվածը թուրքական խորքային պետությունը դիտարկում է պետական կառավարման շեղումնաբանության (դևիանտոլոգիայի) տեսության[17] տեսանկյունից՝ քննության առնելով այն երկակի պետության պարաքաղաքական հայեցակարգի համատեքստում:

«Պարաքաղաքական» եզրը 1960-ական թթ. առաջ է քաշել նախորդ դարի երկրորդ կեսի առավել ազդեցիկ քաղաքագետներից

---

[13] Հմմտ. օրինակ, Gürpınar D., *Conspiracy Theories in Turkey: Conspiracy Nation*, London: Routledge, 2020, pp. 61-73, Ertür B., *"The Conspiracy Archive: Turkey's 'deep state' on trial"* in Motha S., Rijswijk H. van (eds.), Law, Memory, Violence: Uncovering the Counter-Archive, Abingdon-on-Thames: Routledge, 2016, pp. 177-194, Bali R. N., "*Komplo Teorileri ve Teorisyenleri"*, Birikim, № 177, Ocak 2004, ss. 31-37:

[14] Տե՛ս Kaya S., *The Rise and Decline of the Turkish "Deep State": The Ergenekon Case,* Insight Turkey, № 1(4), January 2009, pp. 99-113:

[15] Տե՛ս Sabuktay A., *Tracing the deep state,* Perspectives: Political Analysis and Commentary from Turkey, № 1.12, 2012, pp. 4–7.

[16] Տե՛ս Söyler M., նշվ. աշխ., Barak O., *Security Networks, Deep States, and the Democratic Deficit in the Middle East*, The Middle East Journal, № 72(3), 2008, pp. 447–465:

[17] Տեսության ընդհանուր բնութագրի համար տե՛ս Понкин И. В., *Теория девиантологии государственного управления: неопределённости, риски, дефекты, дисфункции и провалы в государственном управлении,* Москва: Буки-Веди, 2016: Հմմտ նաև նույնի *Концепт глубинного государства («Deep State»),* Право и государство, № 3(84), 2019, сс. 43-60:

Դնիդ Իսթոնը՝ նկարագրելու քաղաքական համակարգի շրջանակում և դրա տրամաբանությամբ գործող ինքնավար ենթահամակարգերը[18]: 1972 թ. կանադացի ուսումնասիրող Փիթեր Դեյլ Սքոթը շրջանառության մեջ է դրել պարաքաղաքականությունն իբրև առանձին քաղաքագիտական հասկացություն՝ այն սահմանելով իբրև *«քաղաքական համակարգ կամ գործունեություն, որում հաշվետվողականությունը գիտակցաբար նվազեցված է»*[19]: Ինքը Սքոթն ավելի ուշ մանրամասնում է, որ պարաքաղաքականությունը, ըստ էության, *«քաղաքական մշակույթի ռացիոնալ մակերեսի տակ առկա իռացիոնալությունն է»*[20]: Այս համատեքստում բնութագրական է պարաքաղաքական երկակի պետության նրա սահմանումն իբրև մի միավոր, *«որում կարելի է տարորոշել հանրային պետությունն ու վարընթաց խորքային պետությունը: Խորքային պետությունը դրսևորվում է քողարկված բռնությամբ, կազմակերպված է զինվորականների ու հետախուզական մարմինների կողմից և ներառում է վերջիններիս կապը կազմակերպված հանցավորության հետ»*[21]:

«Երկակի պետություն» եզրույթն արդի քաղաքագիտական մտքի կողմից գերազանցապես կապվում է դրա թերևս առավել

[18] Հմմտ. Easton D., նշվ. աշխ., էջ 50-56:

[19] Scott P. D., *The War Conspiracy: The Secret Road to the Second Indochina War*, Indianapolis: Bobbs-Merrill, 1972, p. 171.Պարաքաղաքականություն (անգլ.՝ *parapolitics*) եզրույթն անգլալեզու փիլիսոփայաքաղաքագիտական արդի խոսույթում կիրառվում է նաև այլ՝ քաղաքական տեսաբաններ Ժակ Ռանսիերի և Ռագհավան Այերի մոտեցումներում տեղ գտած իմաստային համատեքստերում («անդրաքաղաքականություն» կամ «հարաքաղաքականություն» նշանակությամբ): Հմմտ. Rancière J., *Disagreement: Politics and Philosophy*, Minneapolis: University of Minnesota Press, 1999, pp. 61-93; Iyer R., *Parapolitics: Toward the City of Man*, New York: Oxford University Press, 1979, pp. 3-33:

[20] Scott P. D., *Deep Politics and the Death of JFK,* Berkeley: University of California Press, 1993, pp. 6-7.

[21] Նույնի *The War Conspiracy: JFK, 9/11, and the Politics of War,* New York: Mary Ferrell Foundation Press, 2008, p. 238:

հայտնի երկու կիրառությունների հետ: 1941 թ. հրեա քաղաքական տեսաբան Էռնստ Ֆրենկելն այն օգտագործել է՝ բնութագրելու նացիստական Գերմանիայում ավտոկրատիկ պարամիլիտարիզմի (*Machtstaat*) գերակայությունն օրինական պետության (*Rechtsstaat*) նկատմամբ[22]: 1955 թ. ԱՄՆ պետքարտուղարության գործունեությանը նվիրված իր վերլուծականում քաղաքագիտական ռեալիզմի «կնքահայր» Հանս Մորգենթաուն օգտագործում է «երկակի պետություն» եզրը՝ ցույց տալու համար, որ անգամ ժողովրդավարական հասարակություններում այսպես կոչված *«անվտանգային պետությունը»* որոշումների կայացման ընթացքում ունի *«նվազագույնն արդյունավետ վետոյի»* կիրառման հնարավորություն[23]: Փ. Դ. Սքոթն իր պարաքաղաքականության հայեցակարգում պնդում է, որ *«երկրների մեծ մասը դրսևորում է նման երկակիություն»,* թեև այդ դրսևորումները կարող են լինել ակներևության տարբեր աստիճանի[24]:

Պարաքաղաքական ընկալմամբ՝ խորքային պետությունը սեփական (կամ համակարգից դուրս գտնվող կենտրոնի) արժեքային ինքնության պաշտպանության գաղափարի շուրջ

[22] Տե՛ս Fraenkel E., *The Dual State: A Contribution to the Theory of Dictatorship,* Oxford: Oxford University Press, 2017:

[23] Տե՛ս Morgenthau H. J., *The Impact of the Loyalty-Security Measures on the State Department,* Bulletin of the Atomic Scientists, № 11:4, 1955, pp. 134-140: Հոդվածը *«The Corruption of Patriotism»* վերնագրով տեղ է գտել նաև հեղինակի տե՛ս նույնի Politics in the Twentieth Century, vol 1: *The Decline of Democratic Politics*, Chicago: University of Chicago Press, 1962, pp. 390-408:

[24] Scott P. D., *The War Conspiracy: JFK, 9/11, and the Politics of War,* p. 238: Թեև Սքոթի հայացքները (հատկապես սեպտեմբերի 11-ի դեպքերի մեկնաբանության մասով) խստորեն քննադատվել են մասնագիտական գրականության մեջ (տե՛ս, օրինակ, Fenster M., *Conspiracy theories: secrecy and power in American culture*, Minneapolis: University of Minnesota Press, 2008, p. 355, n.120), նրա մոտեցումների հիմքի վրա հատկապես վերջին 3 տասնամյակում նշանակալի ծավալի հետազոտություններ են գրվել: Տե՛ս, հատկապես, Wilson E., Lindsey T. (eds.), *Government of the Shadows: Parapolitics and Criminal Sovereignty*, London: Pluto Press, 2009; Wilson E. (ed.), *The Dual State Parapolitics, Carl Schmitt and the National Security Complex*, London: Routledge, 2012:

ինքնալեգիտիմացված ստվերային հիբրիդային ցանցային[25] համակարգ է, որն այդ ճանապարհին չի խորշում տարաբնույթ, այդ թվում՝ ուժային հարկադրման զորձիքակազմի օգտագործումից[26]:

Հարկ է հավելել նաև, որ ներկայում թուրքական իրականության մեջ խորքային պետությանը զուգահեռ շրջանառվում է նաև «զուգահեռ կառույց»/«զուգահեռ պետություն» (*paralel yapı/paralel devlet*) եզրույթը, որը 2013 թ. դեկտեմբերից ի վեր նախագահ Ռ.Թ. Էրդողանի և նրա աջակիցների կողմից լայնորեն օգտագործվում է քաղաքական խոսույթում[27]:

Զուգահեռ պետության կոնցեպտն առաջ է քաշվել ամերիկացի պատմաբան Ռոբերտ Փաքսթոնի կողմից՝ ֆաշիստական ռեժիմների օրինակով նկարագրելու պետականակերպ այն կազմավորումները, որոնք պաշտոնապես օրինական պետության կամ կառավարության մաս չեն կազմում[28]: Ի տարբերություն խորքային պետության՝ զուգահեռ պետությունը սովորաբար կազմավորվում է օրինական իշխանության կողմից

[25] Արժեքային ինքնություն՝ տեքստ ու կենտրոն ունեցող ցանցային համակարգերի բնութագրի համար հմմտ. պրոֆ. Հովհաննիսյանի ցանցապետության հայեցակարգը՝ Հովհաննիսյան Դ., *Ցանցերի և ցանցապետության էության շուրջ*, ԵՊՀ ՔՄՀԿ Վերլուծական տեղեկագիր, № 12, 2018, էջ 7-17:

[26] Խորքային պետության սահմանման որոնումների տեսանկյունից ուշագրավ է դրա առաջին փորձերից մեկը՝ Բասքըն Օրանի դեռ 2006 թ. գրված հոդվածը՝ Oran B., "*Derin Devlet nedir, nasıl oluşur?"*, 09.06.2006, https://baskinoran.com/derin-devlet-nedir-nasil-olusur/ (հասանելի էր 23.05.2022):

[27] Տե՛ս, օրինակ, *"Erdoğan: Paralel Yapı belki de Cumhurbaşkanlığı'na da girdi"* , Akşam, 29.06.2016, https://www.aksam.com.tr/guncel/cumhurbaskani-erdogan-kulliyede-iftar-programinda-konusuyor/haber-529446;*"Cumhurbaşkanı Erdoğan: Paralel devlet isteyenler Pensilvanya'ya"*, Akşam, 08.04.2018, https://www.aksam.com.tr/siyaset/cumhurbaskani-erdogan-vanda--konusuyor/haber-724462 (հասանելի էին 23.05.2022):
Էրդողանի և ԱԶԿ-ականների համար «զուգահեռ պետության կառույցը» նույնանում է Ֆեթհուլլահ Գյուլենի կողմնակիցների «Հիզմեթ» շարժման հետ: Նույն անունով են հայտնի նաև 2014 թ. հուլիսին շարժման դեմ իրականացված ոստիկանական գործողությունն ու դրան հաջորդած դատավարությունը (*Paralel devlet operasyonu/ davası*):

[28] Տե՛ս Paxton R. O., *The Anatomy of Fascism*, New York: Alfred A. Knopf, 2004, հատկապես՝ էջ 85:

կամ նվազագույնը վայելում է նրա աջակցությունը[29]: Այս իմաստով թուրքական հասարակությունում հասկացության կիրառությունը «պետություն պետության մեջ» նշանակությամբ շեղվում է եզրույթի սկզբնական քաղաքագիտական բովանդակությունից և գործնականում օգտագործում իբրև խորքային պետության հոմանիշ[30]:

Ամերիկացի քաղաքագետ Չարլզ Թիլլիի բնորոշմամբ՝ քաղաքականությունն ու հանցավորությունը, գտնվելով նույն շարունակականության ծիրում, ենթարկվում են որոշակի պատմական օրինաչափությունների[31]: Նպատակ չունենալով ընդգրկել խորքային պետությանն առնչվող ողջ պատմական համատեքստը՝ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել որոշ դրվագների վրա, որոնք որոշակիորեն արտահայտում են պետության ինստիտուցիոնալացված հարաբերությունները հանցավորության հետ՝ բերելով խորքային քաղաքականության տրամաբանության առաջացմանը[32]:

Թուրքական հասարակության շրջանում տարածված մտայնությունը խորքային պետության ավանդույթը կապում է օսմանյան շրջանի հետ: 2007 թ. հունվարի 26-ին՝ Հրանտ Դինքի

---

[29] Հասկացության մասին մանրամասն տե՛ս Понкин И. В., *Концепт и онтология «параллельного государства»*, Право и образование, № 11, 2015, сс. 65–73:

[30] Öztürk A. E., *Conceptual contradictions when it comes to rhetoric about 'parallel state',* Today's Zaman 22.01.2014, լրատվամիջոցի արգելափակումից հետո հոդվածի տեքստը տեղադրված է Academia.edu հարթակի հեղինակի էջում՝ https://www.academia.edu/15572215 (հասանելի էր 23.05.2022):

[31] Tilly Ch., *"War Making and State Making as Organized Crime"*, in Evans p., Rueschemeyer D., Skocpol Th. (eds.), Bringing the State Back In, Cambridge: Cambridge University Press, 1985, p. 170.

[32] Հանրապետական Թուրքիան պատմաբան Թոմաս Գալանթի *«հանցագործներն օգնում են ստեղծել պետությունը, իսկ պետությունը՝ հանցագործներին»* պնդման իրավացիության լավագույն օրինակներից է: Տե՛ս Gallant T.W., "*Brigandage, Piracy, Capitalism, and State-Formation: Transnational Crime from a Historical World-Systems Perspective",* in Heyman J. (ed.), States and Illegal Practices, Oxford: Berg, 1999, p. 25: Հմմտ. նաև Green P., Ward T., *State Crime. Governments, Violence and Corruption*, London: Pluto Press, 2004, pp. 100-104:

սպանությունից օրեր անց տված հարցազրույցում Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը նշել է. *«Համաձայն չեմ, որ խորքային պետություն գոյություն չունի: Այն գոյություն ունի, միշտ էլ գոյություն է ունեցել. չի սկսվում հանրապետական Թուրքիայի շրջանից: Գալիս է օսմանյան շրջանից: Խորքային պետությունն, ըստ էության, ավանդույթից է գալիս, սակայն դրա դերն անհրաժեշտ է նվազեցնել, եթե հնարավոր է՝ լիովին վերացնել այն»*[33]*:*

Թուրքական մերձգիտական-հրապարախոսական շրջանակները երբեմն պարաքաղաքական համատեքստում են դիտարկում[34] պատմական խիստ ընդգրկուն ժամանակաշրջան (գյոքթյուրքերի կիսաառասպելական «Գայլի սերունդ» (*Börü budun*) քվազիհետախուզական խմբավորումից[35] մինչև օսմանյան Սելիմ III սուլթանի և նրա հաջորդների օրոք ձևավորված խորհրդակցական մարմիններ (*meclis-i meşveret*)[36]): Բյուզանդական և ապա օսմանյան միջավայրերում շարունակաբար գոյություն ունեցած խորքային քաղաքական ավանդույթն առանձնապես հստակ է դրսևորվում սուլթան Աբդուլ Համիդ II-ի իշխանության տարիներին: Պրոֆեսոր Ու. Քլիվլենդի ձևակերպմամբ՝ վերջինս *«գրեթե զառանցագին անվստահությունը բոլոր կազմակերպված հաստատությունների*

[33] Թուրքական «Kanal 7» հեռուստալիքի լրագրող Մուսթաֆա Քարաալիօղլուին Էրդողանի տված հարցազրույցը տե՛ս https://www.youtube.com/watch?v=UL2o7O939I0 (հասանելի էր 23.05.2022):

[34] Տե՛ս, օրինակ, Akar A., *Derin devlet: Devletin paralel iradeleri*, İstanbul: Profil Yayıncılık, 2016, ss. 46-56:

Ընդհանրապես, խորքային պետության թեմայով առկա թուրքալեզու գրականությունը գերազանցապես շարադրված է վերևում քննարկված դավադրաբանության գաղափարական ծիրում: Կարևոր բացառություն է լրագրող Բելմա Աքչուրայի ծավալուն փաստագրական աշխատությունը: Տե՛ս Akçura B., *Derin devlet oldu devlet,* İstanbul: New Age Yayınları, 2009:

[35] Հմմտ. İyiat B., *Türk derin devleti*, İstanbul: Kripto Yayınları, 2010, ss. 40-42:

[36] Հմմտ. Parlar S., *Osmanli'dan günümüze gizli devlet,* Istanbul: Bibliotek Yayinları, 1996, ss. 17-28:

նկատմամբ»[37] բերել էր երկրում երկակի կառավարության առաջացման[38]: Ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանն այս առնչությամբ գրում է. «*Աբդուլ Համիդ Երկրորդի կառավարման տարիներին խորքային պետությունը կազմում էին նրա պալատում գործող գրասենյակները, որոնք «մասնագիտանում» էին պետական կառավարման մեկ կամ մի քանի ոլորտներում և, ըստ էության, փոխարինում էին նախարարություններին և կառավարությանն ընդհանրապես»*[39]: Սուլթանական ռեժիմի կողմից ոչ կանոնավոր պարառազմական խմբավորումների (այդ թվում՝ տխրահռչակ համիդիե գնդերի) և գաղտնի գործակալների (*memurin-i hafiye*) լայն օգտագործումը ստեղծել էր մի մթնոլորտ, որում այսպես կոչված սոցիալական հանցավորությունը կարող էր քաղաքական դրսևորում ստանալ[40]: Պատահական չէ, որ Երիտթուրքական հեղաշրջումը հենվում էր այդ թվում նաև ալբանական պարառազմական ֆիդայական խմբերի և կազմակերպված հանցավորության ներկայացուցիչների վրա[41]: Իթթիհաթական ռեժիմի կողմից ստեղծված «Հատուկ կազմակերպություն» (*Teşkilât-ı Mahsusa*) կոչվող գաղտնի հիբրիդային կառույցը, որը Հայոց ցեղասպանության իրականացման հիմնական գործիքներից էր, ժամանակի թուրքական խորքային պարաքաղաքականության քվինտ-էսենցիան է: Պարառազմական այս կազմակերպությունն ակտիվորեն օգտագործում էր նաև երիտթուրքական

[37] Cleveland W. L., Bunton M., *A History of the Modern Middle East,* Boulder: Westview Press, 2009, p. 135:

[38] Հատկանշական է, որ «երկակի կառավարություն» եզրը կիրառում էին նաև սուլթանի ժամանակակից եվրոպացի վերլուծաբանները: Տե՛ս, օրինակ, De Hennin G., *"The Coming Crysis in Turkey"*, in Harris F. (ed.), The Fortnightly Review, vol. 40, London: Chapman and Hall, 1886, p. 567:

[39] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., *Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.),* Երևան, Տիր հրատարակչություն, 2019, էջ 37:

[40] Հմմտ. Gingeras R., *In the Hunt for the "Sultans of Smack:'" Dope, Gangsters and the Construction of the Turkish Deep State,* Middle East Journal, № 65(3), Summer 2011, p. 434:

[41] Հմմտ. Hanioglu Ş., *Preparation for a Revolution: The Young Turks, 1902-1908*, Oxford: Oxford University Press, 2001, pp. 221-227, 254-258.

պատգամավորներից մեկի վկայությամբ[42] կուսակցության առավել հավատարիմ մասը կազմող հանցավոր շրջանակների հնարավորությունները: «Հատուկ կազմակերպության» անդամները հետագայում նշանակալի ազդեցություն են ունեցել թուրքական քաղաքական պատմության վրա: Այդ առնչությամբ Ժնևի միջազգային հարաբերությունների ինստիտուտի դոկտոր Վ. Չրթըրյանն իրավացիորեն գրում է. *«Առաջին աշխարհամարտից անմիջապես առաջ ստեղծված՝ պետության ներսում գործող գաղտնի պարառազմական «Հատուկ կազմակերպությունը» երբեք չի կազմալուծվել: Հակառակը՝ այն հոչակվել և շարունակել է գերակայել պետության նկատմամբ.... «Հատուկ կազմակերպությունից» մինչև ժամանակակից «Խորքային պետություն»՝ պետության ներսում գոյություն ունի արտաօրինական մի համակարգ, որը գործում է առանց օրինական զսպման և հավասարակշռման մեխանիզմների»*[43]: Նախկին թեշքիլյաթականների կազմած քվազիհետախուզական խմբակները (ինչպես օրինակ՝ *Karakol Cemiyeti*, *Zabitân/Yavuz Grubu, Felâh Grubu, Hamza Grubu* և այլն) քեմալական ազգայնամոլական շարժման հաղթանակից հետո ինկորպորացվել են ներկայիս Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (*Millî İstihbarat Teşkilatı*) իրավանախորդի՝ 1926 թ. ստեղծված Ազգային անվտանգության ծառայության (*Millî Emniyet Hizmeti*) կազմում: «Հատուկ կազմակերպության» որոշ անդամներ, ինչպես օրինակ՝ Թուրքիայի Հանրապետության 3-րդ նախագահ Ջելալ Բայարը

[42] Հմմտ. Ergut F., *State and Social Control: The Police in the Late Ottoman Empire and the Early Republican Turkey, 1839–1939*, PhD Dissertation, New School for Social Research, New York, 1999, pp. 185-186: Ֆերդան Էրգութի ատենախոսությունը թուրքերեն տպագրվել է առանձին գրքով, տե՛ս նույնի *Modern devlet ve polis: Osmanlı'dan Cumhuriyet'e toplumsal denetimin diyalektiği*, İstanbul: İletişim, 2021:

[43] Տե՛ս Cheterian V., *Open Wounds: Armenians, Turks and a Century of Genocide*, Oxford: Oxford University Press, 2015, pp. 305–306.

հետագայում բարձրագույն պաշտոններ են զբաղեցրել[44]: Չի ընդհատվել նաև պետության կապը հանցավոր ընդհատակի հետ. քեմալական պատերազմներին մասնակցած սոցիալական հանցագործներից շատերը հանրապետության հռչակումից հետո ներգրավվել են ափիոնատիպ թմրամիջոցների, գլխավորապես՝ հերոինի ապօրինի շրջանառությամբ զբաղվող տրանսազգային ցանցերում, որոնց հիմքի վրա ձևավորվել է նաև քաղաքական կշիռ ունեցող ժամանակակից թուրքական մաֆիան[45]:

Այնուհանդերձ, թուրքական խորքային պետությունը, առաջին հերթին, ասոցացվում է իր զինվորական բաղադրիչի հետ: Թուրքիայի Հանրապետության 9-րդ նախագահ Սուլեյման Դեմիրելը, 2005 թ. ապրիլի 17-ին «CNN Türk» հեռուստաալիքի «Ankara Kulisi» հաղորդման եթերում պատասխանելով խորքային պետության բնույթի մասին հարցին, հայտարարել էր, որ *«խորքային պետությունը զինվորականությունն է»*: Ամիսներ անց մեկ այլ՝ «NTV» հեռուստաալիքի «Basın Odası» հաղորդման ընթացքում Դեմիրելին հյուրընկալող լրագրող Յավուզ Դոնաթը մեջբերեց իր հետ զրույցում երկրի 7-րդ նախագահ, 1980 թ. ռազմական հեղաշրջման առաջնորդ, բանակի գեներալ Քենան Էվրենի արձագանքը թեմայի շուրջ Դեմիրելի մոտեցումներին՝ *«պարոն Դեմիրելը ճիշտ է. խորքային պետությունը մենք ենք»*[46]:

---

[44] Բայարն իր ինքնակենսագրականում հղումներ է կատարել «Հատուկ կազմակերպության» առաջնորդներից Էշրեֆ Քուշչուբաշըի դեռևս անտիպ հուշագրությունից (այն հրատարակվել է ավելի ուշ, տե՛ս Kuşçubaşı E., *Hayber'de Türk cengi*, Stoddard Ph. H. (haz.), İstanbul: Arba Yayınları, 1997)՝ փաստացի ընդունելով իր ներգրավվածությունը կազմակերպության գործունեության մեջ: Հմմտ. Bayar C., *Ben de yazdım: milli mücadeleye giriş,* c. 5, İstanbul: Baha Matbaası, 1967, s. 1574:

[45] Հմմտ. Gingeras R., *Heroin, Organized Crime, and the Making of Modern Turkey,* Oxford: Oxford University Press, 2014, հատկապես՝ էջ 245:

[46] Տե՛ս *"Süleyman Demirel: İki devlet var",* NTVMSNBC, 16.11.2005, https://web.archive.org/web/20051125093827/http://www.ntvmsnbc.com/news/349780.asp (լրատվամիջոցի նախկին կայքի տվյալ էջի պատճենը հասանելի էր 23.05.2022): Հատկանշական է, որ Յավուզը նույն թվականի ապրիլին խորքային պետության թեմայով հարցազրույց էր ունեցել Էվրենի հետ: Տե՛ս Donat Y., *"Kenan Evren: Derin*

Խորքային պետության հիբրիդային կառույցում զինվորականության դերի բարձրացումը համընկնում է Սառը պատերազմի հետ: Թրումանի դոկտրինի շրջանակում ձախակողմյան շարժումների դեմ պայքարի իրականացման նպատակով 1950-ական թթ. երկրորդ կեսից ԱՄՆ հատուկ ծառայությունները եվրոպական երկրներում նախաձեռնել էին գաղտնի գործողությունների համալիր, որը հայտնի է «Գլադիո» գործողություն (*Operation Gladio*) ընդհանուր անվան տակ: «Գլադիոյի» թուրքական ճյուղավորումը, որ ստացել էր «Կոնտրգերիլյա» *(Kontrgerilla)* ծածկանունը, դրսևորվում էր առանձնացված անմիջականորեն ռազմական ստորաբաժանման տեսքով (մինչև 1965 թ.՝ Մոբիլիզացիոն մարտավարական խումբ (*Seferberlik taktik kurulu*), մինչև 1992 թ.՝ Հատուկ պատերազմական բաժին (*Özel harp dairesi),* 1992 թ. հետո՝ Հատուկ նշանակության ուժերի հրամանատարություն *(Özel Kuvvetler Komutanlığı*))[47]: Թուրքական ստորաբաժանման ղեկավար թուրք բարձրաստիճան զինվորականները, թեև առերևույթ ենթարկվում էին կենտրոնական իշխանությանը, սակայն իրականում ուղիղ կապ էին պահպանում ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության խնամարկուների հետ: Դեռ 1949 թ. մարտին ամերիկյան գլխավոր շտաբի կողմից մշակված ռազմավարական փաստաթղթի JSPC 891/6 հավելվածում ամրագրված էր, որ թուրքական ազգայնականությունը և պանթուրքիզմը կարող են հաջողությամբ օգտագործվել հակակոմունիստական պայքարում[48]: Ուստի բնական է, որ նման գաղափարներով առաջնորդվող՝ իրենց

devlet... Evet... Var... Bir realite...", Sabah, 04.04.2005, https://www.sabah.com.tr/yazarlar/donat/2005/04/04/kenan_evren_derin_devlet_evet_var_bir_r (հասանելի էր 23.05.2022):

[47] «Գլադիո» գործողությունների համալիրի մասին տե՛ս շվեյցարացի պատմաբան Դանիելե Գանզերի աղմկահարույց աշխատությունը՝ Ganser D., *NATO's Secret Armies: Operation GLADIO and Terrorism in Western Europe*, London: Routledge, 2005, մասնավորապես՝ Թուրքիայում «Կոնտրգերիլյա» գործողության մասին՝ էջ 224-244:

[48] Նույն տեղում, էջ 226:

բնույթով պարառազմական միավորումները, մասնակցություն են ունեցել օրինակ 1955 թ. սեպտեմբերի Ստամբուլի պոգրոմին և 1978 թ. դեկտեմբերի Մարաշի ալևիների կոտորածին[49]: Մոբիլիզացիոն մարտավարական խումբն ու Հատուկ պատերազմական բաժինն օգտագործվել են նաև 1960 ու 1980 թթ. ռազմական հեղաշրջումների և 1971 թ. ռազմական միջամտության ընթացքում ԱՄՆ դերակատարության ապահովման նպատակով[50]:

Սրան զուգահեռ, խորքային ազդեցության շրջանակները ներգրավված էին մեծ թվով տարաբնույթ արտաօրինական գործողություններում ինչպես Թուրքիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս. այդ թվում՝ քաղաքական ենթատեքստ ունեցող հաշվեհարդարներ (օրինակ՝ լրագրողներ Աբդի Իփեքչիի և Ուղուր Մումջուի սպանությունները, Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի դեմ մահափորձը[51]), Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (*ASALA*) դեմ հակազդման գործողությունները 1980-ական թթ., Թուրքիայում քրդական ընդհատակի դեմ բռնարարքներն ու սպանությունները 1990-ական թթ. ժանդարմերիայի հատուկ ջոկատավորների (տխրահռչակ՝ *JİTEM*) կողմից և անգամ 1995 թ. Ադրբեջանում նախագահ Հեյդար Ալիևի դեմ հեղաշրջման ձախողված փորձը[52]:

---

[49] Տե՛ս Üngör U. Ü., *Paramilitarism: Mass Violence in the Shadow of the State*, Oxford: Oxford University Press, 2020, p. 42:

[50] Այս մասին տե՛ս Aslan Ö., *The United States and Military Coups in Turkey and Pakistan: Between Conspiracy and Reality,* Cham: Palgrave Macmillan, 2017, pp. 107-200; Գևորգյան Ա., *1960 թ. թուրքական ռազմական հեղաշրջմանն ԱՄՆ-ի ներգրավվածության հարցի շուրջ*, Արևելագիտության հարցեր, № XII, 2016, էջ 180-195:

[51] Չնայած արևմտյան հետազոտողները Մեհմեթ Ալի Աղջայի կողմից 1981 թ. մայիսի 13-ին իրականացված մահափորձը առաջին հերթին կապում էին խորհրդային հատուկ ծառայությունների հետ՝ դրանում թուրքական ծայրահեղ աջակողմյան պարառազմական շրջանակների դերակատարությունը բավական լավ ուսումնասիրված է: Տե՛ս, օրինակ, Bale J.M., *The Ultranationalist Right in Turkey and the Attempted Assassination of Pope John Paul II*, Turkish Studies Association Bulletin, № 17, April 1991, pp. 1-63:

[52] Ըստ տեղեկությունների՝ թուրքական շրջանակների ներգրավմամբ Ալիև ավագի դեմ հեղաշրջման փորձը, որը կապված էր Ադրբեջանի տարածքով դեպի արևմուտք

1996 թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Սուսուրլուք քաղաքի մոտ տեղի ունեցավ մի ավտովթար, որը մասնակիցների հասարակական դերերի բազմազանությամբ դարձավ խորքային պետության հիբրիդային բնույթի թերևս ամենաակնհայտ դրսևորումը[53]: Եթե Սուսուրլուքի դեպքը խորքային պետության թեման դարձրեց թուրքական հանրային շրջանակների լայն քննարկման առարկա[54], ապա 2000-ական թթ. երկրորդ կեսին «Էրգենեքոն» կազմակերպության շուրջ բացահայտումներն ու դրան հետևած դատավարությունը թեմայի վրա բևեռեցին նաև միջազգային հանրության ուշադրությունը[55]: Այս գործով թուրքական դատական իշխանությունը ևս ընդունեց, որ խորքային պետությունը, *«երկրում բազում տարիներ ակտիվ լինելով»* իբրև «*անթիվ գործողությունների թիկունքում գործող մութ ուժ»,* իրավունքի գերակայության ապահովման ճանապարհին վերածվել է *«առանցքային խոչընդոտի»*[56]: Բրիտանացի լրագրող Գարեթ Ջենկինսի ձևակերպմամբ՝ «Էրգենեքոնի» և բացահայտված գաղտնի այլ դավադիր կազմակերպությունների գործերով մեղադրականներն *«այնպես են ողողված հակասություններով, ասեկոսեներով, ենթադրություններով, ապատեղեկատվությամբ, անտրամաբանական, աբսուրդ և կեղծ եզրահանգումներով»*, որ,

---

թմրանյութերի շրջանառության ուղիների նկատմամբ վերահսկողության խնդրի հետ, տապալվել էր միայն Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի միջամտությունից հետո: Տե՛ս Pope H., *"Turkey Aided Death Squads, Prime Minister's Probe Says"*, The Wall Street Journal, 26.01.1998, https://www.wsj.com/articles/SB885769663279802000 (հասանելի էր 23.05.2022):

[53] Մանրամասն տե՛ս Gunter, M. M., *Susurluk: The Connection Between Turkey's Intelligence Community and Organized Crime*, International Journal of Intelligence and CounterIntelligence, № 11(2), 1998, pp. 119–141:

[54] Հմմտ. *"Derin Devlet' Sözlükte"*, Milliyet, 08.02.2004, https://www.milliyet.com.tr/siyaset/derin-devlet-sozlukte-5120788 (հասանելի էր 23.05.2022):

[55] Թեմայի շուրջ տե՛ս, օրինակ, Aydinli E., *Ergenekon, New Pacts, and the Decline of the Turkish "Inner State",* Turkish Studies, № 12(2), 2011, pp. 227–239, Ավագյան Ա., «*Թուրքիայում խորքային պետության եւ «Էրգենեկոն»-ի կապի շուրջ»,* Արմենպրես, 03.05.2011, https://armenpress.am/arm/news/651233/ (հասանելի էր 23.05.2022):

[56] Ertür B., նշվ. աշխ., էջ 180:

ըստ էության, հնարավորություն չեն տալիս խորքային պետության մասին որևէ քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմել[57]: Ասվածը ճշմարիտ է նաև «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման հետագա շրջանի դեպքերի, այդ թվում՝ Էրդողան-Գյուլեն գաղափարական խզման և 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման փորձի ու դրան հաջորդած զարգացումների համատեքստում: Դրանց վերաբերյալ անգամ մասնագիտական շրջանակներում *«առկա են ավելի շատ հարցեր, քան պատասխաններ»*[58]:

2021 թ. մայիսին թուրքական քրեական հեղինակություն, «Էրգենեքոնի» գործով մեղադրյալ Սեդաթ Փեքերն իր յութուբյան ալիքում[59] սկսեց հրապարակել տեսաուղերձներ, որում անդրադառնում էր խորքային պետության, թմրանյութերի շրջանառության, դրանցում թուրք պաշտոնյաների ներգրավվածության, տարածաշրջանային հակամարտություններում թուրքական մասնավոր ռազմական ստորաբաժանումների (մասնավորապես՝ շատերի կողմից Էրդողանի «անձնական բանակ» համարվող *«SADAT»* միջազգային պաշտպանական խորհրդատվական ընկերության) մասնակցության թեմաներին: Աղմկահարույց այս հայտարարությունները թուրքական հասարակական շրջանակներում դարձան խորքային պետության թեմայով նոր քննարկումների պատճառ: Ընդ որում, ավելի ու ավելի հնչեղ են դառնում այն կարծիքները, թե պաշտոնավարման սկզբում

[57] Jenkins G.H., *Between Fact and Fiction: Turkey's Ergenekon Investigation*, Washington: Silk Road Studies, August 2009, p. 11.

[58] Տե՛ս Yilmaz I., Albayrak I., *Populist and Pro-Violence State Religion: The Diyanet's Construction of Erdoğanist Islam in Turkey*, Singapore: Palgrave Macmillan, 2022, p. 108: Հմմտ. նաև Çiçekoğlu F., Turan Ö., *"Introduction"*, in Çiçekoğlu F., Turan Ö. (eds.), The Dubious Case of a Failed Coup: Militarism, Masculinities, and 15 July in Turkey, Singapore: Palgrave Macmillan, 2019, pp. 1-2:

[59] Տե՛ս https://www.youtube.com/c/sedatpekerreis (հասանելի էր 23.05.2022):

խորքային պետությունը ջախջախելու մասին խոսող Թուրքիայի նախագահն իրականում փորձում է պարաքաղաքական, պարառազմական և կազմակերպված հանցավորության ընդհատակը ծառայեցնել սեփական շահերին[60]:

***

Ձախակողմյան հայացքներով հայտնի թուրքական «Բիրիքիմ» ամսագրի 1997 թ. հունվար-փետրվարյան՝ խորքային պետության նվիրված հատուկ համարի խմբագրականը արձանագրում էր, որ օրինական պետությունը (*état de droit*) և խորքային պետությունը Թուրքիայում նույն նյութի պինդ և հեղուկ վիճակներն են[61]: Այս ծագումնաբանական համասեռությունը առավել հստակ է ընդգծվում ճգնաժամային իրավիճակներում, երբ առաջնային պլան է մղվում *«պետությունը փրկելու»*՝ իր արմատներով մինչև 19-րդ դ. կեսերից հասնող անկյունաքարային գաղափարը[62]: Իր առանցքում նման շահի (*raison d'état*) առկայությունն ինքնալեգիտիմացնում է ինչպես դրա շուրջ հասարակության տրամագծորեն հակադիր շերտերի (ծայրահեղ ազգայնականներ ու իսլամական թարիքաթների անդամներ, օրինապահ մարմինների աշխատակիցներ ու հանցավոր ընդհատակի ներկայացուցիչներ և այլն) համագործակցությունը, այնպես էլ այդ նպատակով նաև արտաօրինական գործիքակազմի կիրարկումը:

---

[60] Հմմտ., օրինակ, Taşpınar Ö., "*Erdogan's Alliance with the Deep State",* Asia Times, 22.05.2019, https://asiatimes.com/2019/05/erdogans-alliance-with-the-deep-state/; Cohen Yanarocak H. E., Spyer J., *"Turkish Militias and Proxies"*, The Jerusalem Institute for Strategy and Security, 27.01.2021, https://jiss.org.il/en/yanarocak-spyer-turkish-militias-and-proxies/; Cengiz M.,, Karademir K., *"The Impacts of Authoritarianism on Organized Crime in Turkey"*, The Small Wars Journal, 11.08.2020, https://smallwarsjournal.com/jrnl/art/impacts-authoritarianism-organized-crime-turkey (հասանելի էին 23.05.2022):

[61] Տե՛ս *Türkiye'de Devlet*, Birikim, № 93/94, Ocak/Şubat 1997, s. 16:

[62] Հմմտ. Al S., *Patterns of Nationhood and Saving the State in Turkey: Ottomanism, Nationalism and Multiculturalism*, New York: Routledge, 2019:

THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE

Arshak Gevorgyan

(Summary)

Ever since the late nineties, the opaque notion of the deep state has constituted the mainstream of Turkish political life. Nonetheless, the very concept of it is, as yet, notoriously difficult to analyze — perhaps precisely because of its nebulous structure.

Although sometimes stigmatized as a grand conspiracy theory, the clandestine relationship between the security-intelligence apparatus, judicial circles, influential public interests and organised criminal syndicates in Turkey is reasonably well documented and even partly acknowledged by the country's highest political authorities. Most of the research community scrutinizes it in the context of state consolidation and civil-military relations, considering the deep state to be a gray zone between authoritarian regime and (neo-) liberal democracy.

The paper, by contrast, situates the topic of the Turkish deep state within the theoretical framework of parapolitical studies while attempting to comprehend the trajectory of this multiplex phenomenon through its historical and political milieu. By putting a finger on the problem of disassociation between the legality and the legitimacy of the contemporary state, it argues that Turkey’s continuous entanglement with extralegal actors resulted in the emergence of political duality.

ПАРАПОЛИТИЧЕСКОЕ ВИДЕНИЕ ГИБРИДНЫХ СЕТЕВЫХ СТРУКТУР ТЕНЕВОГО УПРАВЛЕНИЯ: ТУРЕЦКОЕ ГЛУБИННОЕ ГОСУДАРСТВО

Аршак Геворкян

(Резюме)

Начиная с конца девяностых годов прошлого века размытое понятие глубинного государства стало частью мейнстрима турецкой политической жизни. Тем не менее, исследование самой концепции все

еще остается крайне сложным, возможно именно из-за ее расплывчатой структуры.

Несмотря на то, что это иногда считается теорией заговора, скрытые связи между армией, органами безопасности и разведки, судебными кругами, влиятельными общественными деятелями и организованными преступными синдикатами в Турции довольно хорошо задокументированы, а также частично признаны высшим руководством страны. Большинство исследователей изучают это в контексте государственной консолидации и гражданско-военных отношений, считая глубинное государство серой зоной между авторитарным режимом и (нео)либеральной демократией.

В отличие от этого, данная статья рассматривает тему турецкого глубинного государства в теоретических рамках параполитических исследований, пытаясь уяснить общую траекторию развития этого сложного феномена через историческую и политическую обусловленность. Обращая внимание на проблему диссоциации между легальностью и легитимностью современного государства, утверждается, что возникновение политической двойственности в Турции обусловлено постоянными переплетениями государства с внезаконными силами.